

**ՀՀ ԳԱԱ հայագիտական հետազոտությունները ֆինանսավորող համահայկական
հիմնադրամի կողմից ֆինանսավորվող «Արևելյան աղբյուրագիտության
Հայաստանի թվային գրադարան» (այսուհետ՝ ԱԱՀԹԳ) ծրագրի շրջանակներում
կատարված աշխատանքի հաշվետվություն.**

ղեկավար՝ պ.գ.դ. Ազատ Բոգոյան

(8 հունվարի 2020– 31 մարտի 2020 թ.)

Ստորև ներկայացվում է ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքները.

1/ հոկտեմբերի 1-ց պ.գ.դ. Ա. Բոգոյանի ղեկավարությամբ ծրագրի շրջանակներում աշխատանքի են ընդունվել պ.գ.թ. Գ. Մարգարյանը /համակարգող մասնագետ/, օպերատոր-մատենագետներ՝ Ա. Ավետիսյանը և Է. Ղազարյանը և օպերատոր Ե. Մելքոնյանը, ինչպես նաև ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի ինստիտուտի գիտաշխատակից՝ ծրագրավորող Ս. Հունանյանը: Նրանցից յուրաքանչյուրի առջև խնդիր է դրվել մուտքագրել և թվայնացնել Միջնադարյան Մերձավոր Արևելքում և Միջերկրայքում ստեղծված բազմադարյան մատենագրական հուշարձանները, ինչպես նաև դրանց շուրջ ստեղծված պատմագրական, արևելագիտական, գրականագիտական, լեզվաբանական, իրավաբանական և կրոնագիտական ողջ գրականությունը: Յուրաքանչյուր մասնագետի և ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրինության հետ կնքվել է համապատասխան պայմանագրեր:

2/ **ԱԱՀԹԳ ծրագրի ղեկավար Ա. Բոգոյանի և հիշյալ աշխատակիցների ջանքերով քննարկվել և նախնական համաձայնություն է ձեռք բերվել աշխատանքների ծավալի ընդլայման և բարելավման համար համագործակցության հուշագիր** ստորագրել ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի և ՀՀ ԳԱԱ Ինֆորմատիկայի և ավտոմատացման պրոբլեմների ինստիտուտի միջև: Նշենք, որ պայմանագրի ձևն արդեն լրամշակված և պատրաստ է ստորագրման, սակայն դրա ստորագրումը հետաձգվել է համաճարակի և դրա առաջացրած հետևանքների պատճառով):

3/ Հաշվետու ժամանակահատվածում՝ 01,01,2020 թ.-30,03,2020 թ. ՀՈԻՖՀՀ կողմից ֆինանսավորվող «Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարան» թեմայի կատարողները թվայնացրել, թվային գրադարանի կայքէջում մուտքագրել են ավելի քան 400 անուն գրականություն, սկանավորել, թվայնացրել են՝ փոխակերպելով գրքային տարբերակի և մուտքագրել ավելի քան 10100 էջ կամ 37 կտոր գրականություն, իրականացրել կայքէջի բարելավման, թվային միջազգային հարուստ գրադարանների բաժանորդագրման և թվային նոր գրականության աշխատանքներ:

4/ Ծրագրի շրջանակում ընթացիկ տարվա հունվար-փետրվար ամիսների ընթացքում Արեւելյան աղբյուրագիտության թվային գրադարանի շտեմարան թվային, ներբեռնման հասանելիությամբ մուտքագրվել է շուրջ 200 միավոր **օսմանագիտական** և արևելագիտական այլ գրականություն:

Այս ամիսների ընթացքում Արեւելյան աղբյուրագիտության թվային գրադարանի շտեմարան մուտքագրվել են բազմաբովանդակ գրականություն, որոնք մասնավորապես վերաբերվում են արեւելյան աղբյուրագիտությանը, պատմությանը, պատմագրությանը, գրականությանը, լեզվաբանությանը, ձեռագրագիտությանը, մատենագիտությանը եւ այլնին:

Ընդգրկված աշխատությունների լեզուները բազմազան են՝ հայերեն, օսմաներեն, թուրքերեն, ադրբեջաներեն, ռուսերեն, անգլերեն, գերմաներեն, ֆրանսերեն եւ այլն:

Ստորեւ ներկայացված են մուտքագրված գրականություն որոշ նմուշ-օրինակներ.

Արեւելյան աղբյուրագիտությանն ու պատմագրությանը նվիրված աշխատություններ՝
"Начальная история Арменіи" у Себеоса въ ея отношеніяхъ къ трудамъ Моисея Хоренскаго и Фауста Византійскаго. (По поводу брошюры С. Малхасянъ: Մերէոսի պատմութիւնը եւ Մ. Խորենացի, 1899, Тифлисъ); **К. Э. Босворт**, *Мусульманские Династии, Справочник по хронологии и генеалогии, (Перевод с английского и примечания П. А. Грязневича)*, Москва, 1971; **Աբու Ալ-Հասան Ալի իբն Ալ-Հուսայն իբն Ալի Ալ-Մասուդի**, «Ոսկու Մարգագետիններ եւ Գոհարների Հանքեր» («Մուրուջ Ազ-Զահաբ Վա Մաադին Ալ-Ջավահիր»), «Ցուցումների եւ Դիտարկումների գիրք» («Քիթաբ Ատ-Տանբիհ Վալ-իշրաֆ») (հատվածներ Հայաստանի, Կովկասյան լեռների եւ հարեւան երկրների մասին), Երեւան, 2007; **Ն. Ադոնց**, *Պատմական ուսումնասիրություններ*, Լոյս ընծայեց՝ Ա. Խոնդկարեան, Պարիս, 1948; **Frédéric Alpi**, *La Route Royale Sévère D'antioche el les Églises d' Orient (512-518) I Text*, Beyrouth, 2009; **Frédéric Alpi**, *La Route Royale Sévère D'antioche el les Églises d' Orient (512-518) II Sources et Documents*, Beyrouth, 2009; **Mirza Kazem A. Beg**, *Derbend-Nameh, or The History of Derbend; Translated From A Select Turkish Version and Published With the Texts and With Notes*, St. Petersburg, 1851 եւ այլն:

Հայագիտական-հետազոտական, աստվածաբանական, գիտական ամսագրերի շարքեր, առանձին մատենաշարեր, դասախոսությունների ձեռնարկներ՝

Գանձասար Ա, Հայ Առաքելական եկեղեցու Արցախի Թեմի Աստուածաբանական Հանդես, (Գլխ. խմբ.՝ Մեսրոպ քահանայ Արամեան); Բանբեր Հայագիտության 2019 թ., N 2 (20), *Դասախոսություններ Հայ Մատենագրութեան Մասին*, Հրատարակութիւն՝ Համազգային Մշակութային Ընկերութեան, Տպարան՝ Համազգային ընկերութեան,

Պեյրուք, 1951; Մատենաշար «Հայ-Վրացական Հարաբերություններ», Գիրք 5, Երեւան, ԵՊՀ Հրատարակչություն, 2019; Մատենաշար «Միջնադարյան ժողովրդական մշակույթ. աղբյուրներ եւ ուսումնասիրություններ» Գիրք 1-2, **Արծրունի Սահակյան**, Հայ միջնադարյան ժողովրդական մշակույթի խնդիրներ 1. Հեքիաթ 2 Խաչքար, Երեւան, Նաիրի, 2017; Ազգային Մատենաշար (թվով՝ 9); **Յովհաննէս Երզնկացի Մատենագրութիւն**, Հատոր Ա., Ճառեր եւ Քարոզներ, Բնագրերը հրատարակության պատրաստեցին **Արմենուհի Երզնկացի-Տէր-Սրայյանը** եւ **Էդվարդ Բաղդասարյանը**, Երեւան, Նաիրի Հրատարակչություն, 2013; Լիակատար Վարք եւ Վկայաբանութիւն Սրբոց (թվով՝ 11) եւ այլն:

Օտարալեզու ձեռագրացուցակներ, որոնք վերաբերվում են մասնավորապէս տարբեր ինստիտուտների, գրադարանների եւ թանգարանների ձեռագրային հավաքածուներին՝

Emilie Savage-Smith, "A descriptive Catalogue Of Oriental Manuscripts At St John's College Oxford", Oxford University Press; *Comparative Oriental Manuscript Studies An Introduction*, Edited by **Alessandro Bausi**, Pier Giorgio Borbone and etc., COMSt., 2015; **Boris Liebrecht**, *Arabic, Persian and Turkish Manuscripts in the University Library Leipzig* եւ այլն:

Օսմանյան եւ թուրք գրականությանն ու լեզվաբանությանը վերաբերվող աշխատություններ, առանձին հոդվածներ, ատենախոսություններ, հանրագիտարաններ, բառարաններ եւ այլն՝

Gabor Agoston and Bruce Masters, *Encyclopedia of the Ottoman Empire*, New York, 2009; **Murat Cankara**, "Rethinking Ottoman Cross-Cultural Encounters: Turks and the Armenian Alphabet", *Middle Eastern Studies*, 2015, Vol. 51, No. 1, 1_16; **Cemal Demircioğlu**, *OSMANLI EDEBİYAT GELENEĞİNDE TERCÜME ESERLERİ İNCELEMEDE BİR YÖNTEM ÖNERİSİ: EYLEME ODAKLI SÖYLEM ANALİZİ*, John Benjamina Publishing Company, Amsterdam/Philadelphia, 2009; **Orhan Hançerlioğlu**, *Dünya İnançları Sözlüğü*, 3. Basım, Remzi Kitabevi, Istanbul, 2000; **Mehmed Fuad Köprülü**, *Early Mystics in Turkish Literature*, 2006, Gary Leiser and Robert Dankoff; **Özgen Felek**, *Fehîm-i Kadîm Dîvânı'nın Tahlîli*, Doktora Tezi, Elazığ, 2007; **Ramazan Ekinci**, *Fehîm-i Kadîm'in Latîfeleri: Tercüme-i Letâyif-i Kibâr-i Kümmelîn*, *Turkish Studies - International Periodical For The Languages, Literature and History of Turkish or Turkic* Volume 8/4 Spring 2013, p. 749-768, ANKARA-TURKEY, **Murat Umut Inan**, *Writing a Grammatical Commentary on Hafiz of Shiraz: A Sixteenth-century Ottoman Scholar on the Divan of Hafiz*, University of Washington, 2012; **Sait Okumuş**, *KLÂSIK TÜRK EDEBİYATINDA XV. VE XVI. YÜZYIL NESİR VE NÂSIRLERINE BAKIŞ*, Uluslararası Sosyal Arastırmalar Dergisi, Cilt: 4, Sayı: 18, Yaz: 2011;

Քրդերեն-Հայերեն, Հայերեն-Քրդերեն գործնական բառարան, կազմողներ՝ Վ. Լ. Կատվայան, Ա. Ա. Աբրահամյան, Գ. Մ. Մխիթարյան, Երեւան, 2016 եւ այլն:

5/ Ծրագրի շրջանակում նշված ամիսների ընթացքում Արևելյան աղբյուրագիտության Հայաստանի թվային գրադարանի շտեմարանը համալրվել է ներբեռնելի թվային հասանելիությամբ մուտքագրված շուրջ 200 միավոր **իրանագիտական** գրականությամբ:

Հարկ ենք համարում նշել, որ ինչպես նախորդ բոլոր անգամներում, այս անգամ ևս մուտքագրված միավորների շարքը բազմաբովանդակ է: Զգալի թիվ են կազմում հատկապես արևելյան աղբյուրագիտությանն ու պատմագրությանն առնչվող տարաբնույթ և տարալեզու հետազոտությունները (այդ թվում՝ արևելյան սկզբնաղբյուրներ (թարգմանություններ, խմբագրություններ)): Մուտքագրված միավորների շարքում ընդգրկված են նաև աղբյուրագիտական և պատմագրական բնույթի հատորաշարներ, ինչպես նաև բառարաններ:

Ստորև ներկայացված են վերոնշյալ ամիսների ընթացքում թվային գրադարանի շտեմարան մեր կողմից մուտքագրված միավորներից որոշ նմուշօրինակներ (*հեղինակ, աշխատության վերնագիր*):

- Этнографическое обозрение, кн. № 4. Статьи
- Middle Persian Literature (Mary Boyce)
- Persian literature, comprising the Sháh Námeḥ, the Rubáiyát, the Divan and the Gulistan, vol. 1 (J.H. Gottheil)
- A History of Persian Literature in modern times (A.D. 1500-1924) (Edward G. Brown)
- A Grammar of the Persian language (William Jones)
- A grammar of the Persian language. To which are subjoined several dialogues; with an alphabetical list of the English and Persian terms of grammar (Ibrahim, Muhammad)
- Vocabularies: English, Arabic, Persian, Turkish, Armenian, Kurdish, Syriac
 - A vocabulary of the Persian language - in two parts: Persian and English and English and Persian
- Фольклор На Персидском Языке
 - Tuti-namah. The Tooti nameh, or Tales of a parrot: in the Persian language, with an English translation
- THE ILKHANID BOOK OF ASCENSION: A PERSIAN-SUNNI DEVOTIONAL TALE
- AVESTA READER, TEXTS, NOTES, GLOSSARY AND INDEX (HANS REICHELT)

- Հայոց Նոր Վկաները (1155-1843) (Աշխատութեամբ Յ. Մանանդեանի և Հ. Աճառեանի)
- Նոր Բառգիրք Հայկազեան լեզուի, Հատոր երկրորդ (Հ-Ֆ)
- A VOLUME OF ORIENTAL STUDIES (EDWARD G. BROWNE, M.A., M.B., F.B.A., F.R.C.P. , EDITED BY T. W. ARNOLD AND REYNOLD A. NICHOLSON)
- The Sacred Books of the East, vol. 1 (Translated by various oriental scholars and edited by F. Max Muller)
- The Royal Academy of Arts; a complete dictionary of contributors and their work from its foundation in 1769 to 1904, vol. IV (Graves, Algernon)
- Hindustani self-taught by the natural method with phonetic pronunciation (Blumhardt, James Fuller)
- A history of Egypt, from the earliest times to the Persian conquest (Breasted, James Henry)
- A history of Persia, vol. 2 (Sykes, Percy Molesworth)
- Cambridge Ancient History Vol.4 (persian Empire And The West) (Cook, S.a)
- History Of The Persian Empire (A.T.Olmstead)
- The History of Ancient Iran (Richard N. Frye)
- Naṣīr al-Dīn al-Ṭūsī's Memoir on Astronomy (al-Tadhkira fi ‘ilm al-hay’a), vol.1 (F.G. Ragep)
- گلستان شیخ مصلح الدین سعدی // Gulistan Saadi Shirazi, (English translation with Persian text)
- مير غلام محمد غبار // Afghanistan in the course of History, Part 1 (میر غلام محمد غبار)
- The Priest And The Great King : Temple Palace Relations In The Persian Empire (Lisbeth S. Fried)

6/ Ծրագրի կատարող ծրագրավորող մասնագետ Ս. Հունանյանի կողմից իրականացվում են թվային գրադարանի **նոր կայքէջի ստեղծման**, բարելավման, էլեկտրոնային նոր հարթակի մշակման, սերվերային ծավալի ընդլայնման, նոր **եվրոպական (լեհական)** գրադարանային ֆոնդի սերվերային պահուստին միանալու, թվային տարբեր ֆորմատներով կայքէջում գրականության մուտքագրման և հասանելիության ապահովման աշխատանքներ: Աշխատանքները դեռևս ընթացիկ փուլում են և ավարտին են հասցվելու հաջորդ եռամսյակի առաջին ամսվա ընթացքում:

7/Էլեկտրոնային եվրոպական և միջազգային տարբեր գրադարաններում կատարված փնտրտուքի արդյունքում ներբեռնվել, թվային համապատասխան ֆորմատի է բերվել

100-ից ավելի արևելագիտական գրականություն, եզակի հրատարակությունների թվայնացված տարբերակներ, որոնք ևս հետագայում կմուտքագրվեն ԱԱՀԹԳ կայքէջում:

8/ Սկանավորվել, թվայնացվել և մուտքագրվել է ավելի քան 10.100 էջ գրականություն, դրանցից են՝

**1. 2020թ. եռամսյակային հաշվետվություն(հունվար, փետրվար, մարտ ամիսներ)
սկանավորված, թվայնացված և մուտքագրված գրականության վերաբերյալ**

1. Federic Alpi – LA ROUTE ROYALE D’ANTIOCHE- ET LES EGLISES d’ORIENT (512-518) Vol. 1, BEYROUTH 2009, 360 p.
2. Federic Alpi – LA ROUTE ROYALE D’ANTIOCHE- ET LES EGLISES d’ORIENT (512-518) Vol. 2, BEYROUTH 2009, 176 p.
3. THIERRY BIANQUIS – DAMAS ET LA SYRIE SOUS LADOMINATION FATIMIDE (359-468, 969-1076), DAMAS 1986, 806 p.
4. ARMENIAN HISTORY MATERIALS. In the archives of CENTRAL EUROPE – Erevan 2001, 116 p.
5. Kaiser Heinrich IV.- Göppingen 1998, 107 p.
6. P.H. Newby – Saladin in the time, London 2001, 210 p.
7. Иран (сборник статей) – Москва 1971, 198 ст.
8. Վարդանաց աշխարհացույց . Աշխարհացույց Վարդանանց վարդապետի – Փարիզ 1960, 109 էջ:
9. Louis Bréhier – Les institutions de l’empire byzantin, France 1970, 636 p.
10. Louis Bréhier – Vie et mort de Byzance, Pariz 1992, 628p.
11. Louis Bréhier – La civilization byzantine, Paris 1970, 623p.
12. Nina G. Garsoian – The Problem of Armenian Integration into the Byzantine Empire. Washington 1998, 72p.
13. Nina G. Garsoian – Same PRELIMINARY PRECISIONS ON THE SEPARATION OF The Armenian and IMPERIAL CHURCHES: 1.THE PRESENCE OF “ARMENIAN” BISHOPS AT THE FIRST FIVE OECUMENICAL COUNCILS – 1988, 36p.
14. Norman Housley – DOCUMENTS ON THE LATER CRUSADES (1274-1580), London 1996, 204 p.
15. Фирдоуси - «Шахнаме» т.V, Москва 1984г., 382ст.
16. Фирдоуси – ШАХ-НАМЕ, Москва 1955г., 238 ст.
17. Повесть временных лет ч.I, Москва 1950г., 404 ст.,

18. Повесть временных лет ч. II, Москва 1950 г., 556 ст.,
19. Rubruck – The MISSION OF FRIAR WILLIAM OF RUBRUCK (His journey to the court of the Great Khan Möngke 1253-1255), London 1990, 312 p.
20. А. Манандян – Месроп-Маштоц и борьба армянского народа за культурную самобытность. Ереван 1941 г., 48 ст.
21. Мнханкова В.А. – Николай Яковлевич Марр, Москва 1935 г., 362 ст.
22. S. KAUCHČIŠVILI – GEORGII MONACHI CHRONICON №1. Tbilisi 1920, 328 p.
23. Восточный сборник . Ленинград 1926 г., 200 ст.
24. Учёные записки т. I, Москва 1930 г., 281 ст.,
25. Сборник материалов для описания местностей и племен Кавказа. Тифлисъ 1893 г., 577 ст.
26. Язык и литература т. I, Ленинград 1926, 428 ст.
27. Язык и литература том III. Ленинград 1929 г., 331 ст.
28. Язык и литература том IV. Ленинград 1929 г., 170 ст.
29. Язык и литература том V. Ленинград 1930 г., 346 ст.
30. Язык и история сборник I. Ленинград 1936 г., 239 ст.
31. Труды ноябрьской сессии академии наук СССР 25-30 XI 1951 г.: Ленинград 1952 г., 416 ст.:
32. Яфетический сборник т. I, Петербург 1922 г., 145 ст.
33. Яфетический сборник т. II, Петроград 1923 г., 167 ст.
34. Яфетический сборник т. III, Москва 1925 г., 177 ст.
35. Яфетический сборник т. IV, Ленинград 1926 г., 207 ст.
36. Яфетический сборник т. V, Ленинград 1927, 179 ст.
37. Яфетический сборник т. VI, Ленинград 1930 г., 283 ст.

9/ ՀԱԱԹԳ կայքէջում բաց մատչելիությամբ արևելագիտական աղբյուրների և նոր հետազոտությունների թվային տարբերակները ձեռք բերելու, բաժանորդագրվելու համար Նամակագրական բանակցություններ են իրականացվում BNF, Persée, Jstor.org, Litres, Hathitrust, googlebooks.com և այլ թվային հայտնի գրադարանների հետ, ակնկալվում է, որ աշխատանքների կատարման հաջորդ եռամսյակում արդեն իսկ ձեռք բերված կլինեն համապատասխան պայմանավորվածությունները և բաժանորդագրությունները:

10/ Մեր աշխատողների կողմից բաց ինտերնետային արխիվներից առանձնացվեն են թեմատիկ արևելագիտական արժեքավոր նյութեր /շուրջ 200 անուն/, կայքէջում մուտքագրելու համար:

11/ Նոր գնված սկաներով պատճենավորվելու են նաև ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի Յ. Սալաթյանի և Ն. Մառի ֆոնդի գրքերը:

Թեմայի ղեկավար՝
20.03.2020 թ.

պ.գ.դ. Ա. Բոգոյան



Հաշվետվություն

«Արցախի ազատագրված տարածքների ամրոցների հետազոտություն» թեմայի 2020 թ. առաջին եռամսյակում կատարված աշխատանքների

2020 թ. առաջին եռամսյակում «Արցախի ազատագրված տարածքների ամրոցների հետազոտություն» թեման կատարող գիտահետազոտական խումբը հիմնականում կատարել է կամերալ աշխատանքներ: Մշակվում, վերլուծվում ու կանոնակարգվում են հավաքված փաստագրական նյութերը, պատրաստվելով նրանց գիտական հրատարակության:

Միաժամանակ, հաշվետու ժամանակաշրջանում մեծ քայլ կատարվեց մեր աշխատանքի արդյունքները հանրահռչակելու ուղղությամբ:

Դեռ նախորդ տարի ՀՀ Ազգային ժողովի աշխատակազմի ղեկավարությունը ծանոթանալով ծրագրի շրջանակներում իրականացրած հետազոտություններին՝ ցանկություն էր հայտնել Ազգային ժողովի պատգամավորներին և հյուրերին մոտիկից ներկայացնելու Արցախում փաստագրված նորահայտ ամրոցները: Այնուհետև կազմակերպվեց ցուցապաստառների ցուցահանդեսը, որը բացվեց

փետրվարի 3-ին՝ ՀՀ Ազգային Ժողովի նիստերի դահլիճի ճեմասրահում: Բացման շնորհանդեսին մասնակցեցին ՀՀ ԳԱԱ, ԵՊՀ-ի, ներկայացուցիչներ, ԱԺ պատգամավորներ և հավատարմագրված թղթակիցներ, հյուրեր, ինչպես նաև ՀՀ-ում Արցախի մշտական ներկայացչության պատվիրակությունը: Ճեմասրահի պատերին կախված էին 30 ցուցապաստարներ, որոնցից յուրաքանչյուրը ներկայացնում էր Արցախի ազատագրված տարածքներում բացահայտված մեկ առանձին ամրոց: Պաստառներն ուղեկցվում էին Արցախի Հանրապետության սխեմատիկ քարտեզով, որտեղ նշված էր տվյալ ամրոցի տեղը, համառոտ նկարագրական տեքստ տեղագրական տվյալներով, իսկ հուշարձանները ներկայացված էին առանձին լուսանկարներով, օդալուսանկարներով, և ամենակարևորը՝ տարածքի տեղահանույթի վրա դրված ամրոցի գլխավոր հատակագծով: Համեմատության համար նշենք, որ Հայաստանի հարյուրավոր ամրոցներից տեղահանույթ ու գլխավոր հատակագիծ ունեն միայն մի քանիսը, այն էլ՝ միայն սխտեմատիկ պեղվող ամրոցները: Ցուցահանդեսը լայն արձագանք ստացավ տպագիր և էլեկտրոնային մեդիա դաշտում:

2020 թ. առաջին եռամսյակը արդյունավետ չէր դաշտային աշխատանքների առումով: Եղանակային անբարենպաստ պայմանները թույլ չտվեցին գնալ և օդալուսանկարել անտառածածկույթով պատված այն 4-5 ամրոցները, որոնց պատկերը և տեղահանույթը կարելի է ստանալ միայն փետվար-մարտ ամիսներին, երբ ծառերը դեռ տերևակալված չեն: Մարտի սկզբներին հնարավոր եղավ այցելել միայն Քաշաթաղի շրջանի Հակարի գյուղից 5,0 կմ արևելք ընկած Կառնակաշ միջնադարյան ամրոցը: Այն փոքրաքանակ կայագոր պատսպարելու համար նախատեսված պահակային ամրոց էր: Երկու ոչ մեծ կացարան-զինանոցները տեղակայված են բարձր, զրեթե անմատչելի սրածայր ժայռի գագաթին: Տեղանքը այնքան բարդ է, որ հենակետը լրիվ անմատչելի դարձնելու համար պահանջվել է կառուցել ընդամենը մոտ 25 մ երկարությամբ պարիսպ, այն էլ միայն ժայռի արևմտահայաց կողմից:

Խումբը շարունակում է նյութերի կամերալ մշակումը, որի ընթացքում կազմվում է հայտնաբերված ամրոցների էլեկտրոնային շտեմարանը և շեֆայլեր՝ և

Այս հուշարձանները հանրահռչակելու և առավել հասանելի դարձնելու նպատակով՝ ստացված օրտոֆոտոպլաններից կազմվում է KMZ ֆայլ-հղումներ, որով հնարավոր կլինի Google Earth-ի քարտեզով հետեւնել դրանց տարածույթին:

Կարևոր ձեռքբերումներից թերևս կարելի է համարել նորահայտ ամրոցների եռաչափ մոդելների կառուցումը:

Խումբը դաշտային աշխատանքները կվերսկսի առաջին հնարավորության դեպքում:

«Արցախի ազարագրված տարածքների ամրոցների հետազոտություն»

Թեմայի ղեկավար՝



Գ. Մ. Սարգսյան

28. 03. 2020

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**«ՄԱՀՄԱՆԱԴՐԱԴՐԱՎԱԿԱՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ԱՐԴԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ»**

**ԳԻՏԱՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ 2020Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿՈՒՄ
ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՑԱԼ**

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի գիտական խումբը՝ հաշվետու ժամանակաշրջանում իրականացրել է մի շարք ուսումնասիրություններ նվիրված Հայաստանի Հանրապետությունում (այսուհետ

նան՝ ՀՀ) տիրող սահմանադրաիրավական հիմնախնդիրներին խորհրդարական կառավարման համակարգում: Մասնավորապես, կատարված ուսումնաիրությունները վկայում են, որ ՀՀ-ում խորհրդարանական կառավարման մոդելի շրջանակներում կտրուկ նվազել են Հանրապետության նախագահի գործառույթները, ինչն իր բացասական ազդեցությունն է թողնում իշխանությունների տարանջատման սկզբունքի լիարժեք իրականացման վրա: Հայտնի է, որ ՀՀ Սահմանադրության «Օրենքի ստորագրումը և հրապարակումը» խորագրով հոդված 129 համաձայն, Ազգային ժողովի ընդունած օրենքը Հանրապետության նախագահին ստորագրում և հրապարակում է քսանմեկօրյա ժամկետում կամ նույն ժամկետում դիմում է Սահմանադրական դատարան՝ Սահմանադրությանն օրենքի համապատասխանությունը որոշելու հարցով: Եթե Սահմանադրական դատարանը որոշում է, որ օրենքը համապատասխանում է Սահմանադրությանը, ապա Հանրապետության նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը: Եթե Հանրապետության նախագահը չի կատարում սույն հոդվածով սահմանված պահանջները, ապա Ազգային ժողովի նախագահը հնգօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է օրենքը: Միևնույն ժամանակ, նախկինում, ՀՀ Սահմանադրության (փոփոխ. 27.11.2005թ.) 55-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ՀՀ Նախագահը, Ազգային ժողովի ընդունած օրենքը ստանալուց հետո քսանմեկօրյա ժամկետում ստորագրում և հրապարակում է այն: Դրա հետ մեկտեղ, ՀՀ Սահմանադրությունը Հանրապետության Նախագահին իրավունք էր վերապահում նշված ժամկետում օրենքն առարկություններով կամ առաջարկություններով վերադարձնել Ազգային ժողով պահանջելով նոր քննարկում: Այդ պարագայում, Ազգային ժողովը Հանրապետության Նախագահի վերադարձրած օրենքը քննարկում էր արտահերթ, իսկ Հանրապետության Նախագահի առարկությունները և առաջարկությունները չընդունելու դեպքում, Ազգային ժողովը վերադարձրած օրենքը վերստին ընդունում էր պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Ակնհայտ է, որ 2015թ. -ի սահմանադրական փոփոխություններով ՀՀ Նախագահի վետոյի իրավունքը փոխարինվել է ոչ լիարժեք կամ քվադի-վետոյի իրավունքով, ինչը մի շարք հարցեր և նոր խնդիրներ է առաջացնում օրենքի սանկցիավորման և լեգիտիմության ապահովման գործընթացում:

Միջազգային փորձի ուսումնասիրությունը վկայում է այն մասին, որ օրենքի սանկցիավորման համար որոշ դեպքերում անհրաժեշտ է ոչ միայն պետության նախագահի, այլև բարձրաստիճան այլ պաշտոնյայի ստորագրությունը: Այսպես, Սլովակիայում Ազգային խորհրդի կողմից ընդունված օրենքը ստորագրվում է

Ազգային խորհրդի նախագահի, Կառավարության Նախագահի և պետության Նախագահի կողմից:

Հաշվետու ժամանակաշրջանում գիտական խմբի ուշադրության կիզակետում են գտնվել նաև խնդիրներ կապված պատգամավորի իրավական կարգավիճակի, վերջինիս իրավական և սոցիալական երաշխիքների հետ:

Հայտնի է, որ Ազգային ժողովի աշխատանքի կազմակերպման ձևերից է նաև պատգամավորի գործունեությունը: Առանձնացվում է պատգամավորական գործունեության երկու ուղղություն՝ Ազգային ժողովում և ընտրողների շրջանում: Ազգային ժողովում պատգամավորի գործունեությունը հիմնականում դրսևորվում է վերջինիս պարտականությամբ՝ ակտիվորեն մասնակցել Ազգային ժողովի և նրա մարմինների աշխատանքներին:

Պատգամավորը պետք է մշտական կապի մեջ լինի իր ընտրողների հետ, կատարի քաղաքացիների ընդունելություն, ուսումնասիրի և գործող օրենսդրությանը համապատասխան ընթացք տա ընտրողներից ստացված առաջարկություններին, դիմումներին ու գանգատներին:

Կատարած ուսումնասիրության հիման վրա հանգել ենք այն եզրակացության, որ պատգամավորի կողմից դիմումներում ու գանգատներում բովանդակված գաղափարների ամփոփումը, որի արդյունքները պատգամավորը ներկայացնում է Ազգային ժողով, պետք է հանդիսանան օրենսդիր իշխանության գործունեության հիմքը: Այսինքն, ընդունվող օրենքները պետք է լինեն ռեալ և պատշաճ լուծում տան հասարակության և անձի արջև ծառացած խնդիրներին, ինչը մեր օրերում, ցավոք սրտի, գրեթե չի իրականացվում:

Ինչ վերաբերվում է պատգամավորի իրավունքների, լիազորությունների, ինչպես նաև երաշխիքների շրջանակին, ապա 2015թ.-ի սահմանադրական բարեփոխման և պառլամենտական կառավարման մոդելին անցում կատարելուց հետո, դրանք էականապես ընդլայնվել են:

Ընդհանուր առմամբ, իրավաբանական գրականությունում առանձնացվում են պատգամավորի իրավական և սոցիալական երաշխիքների շրջանակները: Պատգամավորի անձեռնմխելիության (իրավական երաշխիքի) միջազգային փորձն ունի երկու բաղադրիչ՝ ինդեմնիտետ և իմունիտետ: Պատգամավորի ինդեմնիտետը երաշխավորում է պատգամավորի կարծիքի ազատ արտահայտումը պատգամավորական գործունեության շրջանակներում՝ իր լիազորությունների

ժամկետում և դրանից հետո: Իր հերթին, պատգամավորական իմունիտետն ապահովում է պատգամավորի իրավական պաշտպանությունը քրեական հետապնդումից՝ ցանկացած արարքի համար, եթե առկա չէ պառլամենտի համաձայնությունը:

Գիտահետազոտական խմբի ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ իրական ժողովրդավարական, իրավական, սոցիալական պետություններում գործում են պատգամավորի գործունեության երաշխիքների երկու հիմնական խումբ, որոնք անմիջականորեն կապված են վերջինիս գործունեության վայրի հետ: Դրանք են՝ 1) խորհրդարանում և նրա մարմիններում պատգամավորի գործունեությունն ապահովող երաշխիքները, 2) ընտրատարածքում պատգամավորի գործունեությունն ապահովող երաշխիքները:

Խորհրդարանում և նրա մարմիններում պատգամավորի գործունեությունն ապահովող երաշխիքների իրականացումը, Ազգային ժողովում պատգամավորին տեղեկատվությամբ ապահովելու պարտականությունը դրված է Աշխատակազմի վրա: Այսպես, ՀՀ «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ Սահմանադրական օրենքի 160-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի և նրա մարմինների լիազորությունների ու գործառույթների իրականացմանն ուղղված մասնագիտական սպասարկումը, այդ թվում՝ Ազգային ժողովի քննարկմանը ներկայացվող նախագծերի կամ այլ փաստաթղթերի ձևակերպմանն ուղղված մասնագիտական աջակցությունը, ինչպես նաև նյութատեխնիկական ապահովումն իրականացնում:

Միևնույն ժամանակ, ընտրատարածքում պատգամավորի գործունեության կարևոր երաշխիքներից է այն, որ տեղական ինքնակառավարման մարմինները պարտավոր են պատգամավորի պահանջով ամսական առնվազն մեկ օր կահավորված սենյակ կամ դահլիճ հատկացնել նրան՝ քաղաքացիների ընդունելության կազմակերպման համար: Հարկ է նշել, որ ընտրատարածքում բնակչության հետ հանդիպումների ընթացքում և այլ իրավիճակներում ոչ իրավաչափ նպատակներ հետապնդող անձինք կարող են խոչընդոտել պատգամավորի գործունեության իրականացմանը: Հետևաբար, պատգամավորի բնականոն գործունեության ապահովման համար կարևոր երաշխիք է հանդիսանում «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածը համաձայն որի, ոստիկանությունն օրենքով սահմանված կարգով և դեպքերում պարտավոր է աջակցել պատգամավորներին իրենց պաշտոնական պարտականությունները կատարելիս, եթե առանձին քաղաքացիներ չեն ենթարկվում այդ անձանց օրինական

պահանջներին կամ խոչընդոտում են նրանց պաշտոնական գործունեության իրականացմանը:

Կատարված ուսումնասիրությունները վկայում են այն մասին, որ Մարդու իրավունքների եվրոպական դատարանը (այսուհետև՝ ՄԻԵԴ) կարևորվում է պաշտամունքական համակարգում պատգամավորի իրավական և սոցիալական երաշխիքների իրացման ապահովման հիմնախնդրի շրջանակներում պետության հայեցողության սահմանների հստակեցումը, ինչը հնարավորություն է ընձեռում պատգամավորին լիարժեքորեն իրականացնել իր ներկայացուցչական մանդատը:

Հարկ է նշել, որ հաշվետու ժամանակահատվածում գիտական խմբի անդամները հետազոտվող թեմայի շրջանակներում զեկույցներով հանդես են եկել 3 միջազգային գիտաժողովներում, ինչպես նաև տպագրության են հանձնել մի շարք գիտական հոդվածները, այդ թվում՝ արտասահմանյան հեղինակավոր ամսագրերում:

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի

և իրավունքի ինստիտուտի գիտական խմբի ղեկավար,

Իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

Ա.Հ. Խաչատրյան

ՀՀ ԳԱԱ Փիլիսոփայության, սոցիոլոգիայի

և իրավունքի ինստիտուտի տնօրեն,

Իրավաբանական գիտությունների թեկնածու

Լ.Ա. Ղազանչյան

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**«ՀԱՅՐԱՊԵՏ ԴԻ ՄԱՐՏԻՆԻ ՆԱՄԱԿԱԳՐԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ
ՆՈՐ ԶՈՒՂԱՅԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱԿԱՆ ՑԱՆՑԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ
ԱՂԲՅՈՒՐ»**

ԳԻՏԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

(ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ - 01.01.2020-31.03.2020)

Հաշվետու ժամանակահատվածում գիտական ծրագրի շրջանակներում կատարված աշխատանքներն ընթացել են 2 ուղղությամբ՝ Հայրապետ դի Մարտինի աղբյուրագիտական ժառանգության ամբողջացում ու նրա բազմափառ նամակներում ամփոփված տեղեկատվության խմբավորում:

Թեև 17-18-րդ դարերի սահմանագծին Վենետիկում առևտրական գործունեություն ծավալած ու այնտեղ մշտական բնակություն հաստատած Հայրապետ դի Մարտինի գրած ու նրան ուղարկված նամակների մեծագույն մասը պահպանվել է հենց վենետիկյան արխիվներում, այնուհանդերձ նամակագրական ոչ մեծածավալ մի հավաքածու կարելի է գտնել նաև Լոնդոնի Բրիտանական գրադարանում: Ի թիվս հայկական առևտրական այլ վավերագրերի՝ նաև այդ փաստաթղթերից օգտվելը հնարավոր դարձավ Հայագիտական հետազոտությունների ազգային ասոցացիայից (National Association for Armenian Studies and Research) ստացած հետազոտական դրամաշնորհի շնորհիվ, ինչի կապակցությամբ հայտնում եմ իմ խորին շնորհակալությունը: Այսպես՝ 2020 թ. փետրվարին գիտահետազոտական գործունեություն ծավալելով բրիտանական գրադարաններում ու արխիվներում՝ հնարավորություն ունեցա ծանոթանալու Բրիտանական գրադարանի արևելյան ձեռագրերի հավաքածուում 17594 թվահամարի ներքո պահվող 17 հայերեն նամակների (OR MS 15794), որոնք հասցեագրված են եղել Հայրապետ դի Մարտինին: Նամակները գրվել են 1691-1703 թթ. ընկած ժամանակահատվածում և Վենետիկ են ուղարկվել հայ վաճառականներ Ամիրբեկ դի Վարդանի ու Մարտիրոսի կողմից, որոնք առևտրական գործունեություն էին ծավալում Իտալիայի այլ քաղաքներում: Ինչպես Հայրապետ դի Մարտինը, այնպես էլ վերջիններս Գերաք-Միրմանների հայկական

վաճառականական ընտանիքի գործակալներ Էին և փոխանակվելով անհրաժեշտ տեղեկատվությամբ՝ փոխադարձաբար ապահովում Էին միմյանց առևտրական հաջողությունը: Նշված 17 նամակներում քննարկված հիմնական թեման ֆրանսիացի նշանավոր պատմագետ Ֆեռնան Բրոդելի բնորոշած «ապրանքների կարճաժամկետ հեռանկարն» Է, այս կերպ ասած՝ շուկայում պահանջարկ վայելող ապրանքների ու դրանց գների մասին տվյալները: Օրինակ՝ 1691 թ. օգոստոսի 29-ի իր նամակում Ամիրբեկ դի Վարդանը Հայրապետին տեղեկացնում Էր քարբարի առևտրի շուկայում տիրող վիճակի մասին. «Քարպարին խմար իր գիրԷլ, թԷ իկամման չի, բարի այ, թԷ առԷլ չիսԷլ, առոյս ոչ, տիղս բ լարայ գիտայ, լարԷն թ տուկատ առի»: Այս նամակների ուսումնասիրությամբ ամբողջացավ Հայրապետ դի Մարտինի աղբյուրագիտական ժառանգության հավաքագրման գործը, որը սկսվել Էր 2019 թ. փետրվարին Վենետիկի պետական արխիվում:

Գիտական ծրագրի շրջանակում կատարված աշխատանքների մյուս ուղղությունը, ինչպես նշվեց, նամակներում ամփոփված տեղեկությունների խմբավորումն Էր: Նախընթաց ժամանակաշրջանում վերծանելով շուրջ 500 նամակ՝ անցել եմ դրանցում արձանագրված տվյալների խմբավորմանը ըստ արժարժված թեմատիկայի: Անշուշտ, տեղեկությունների մեծ մասը վերաբերում Է միջերկրածովյան առևտրին ու դրանում հայ վաճառականների ներգրավվածությանը: Հայրապետն ու նրա նամակագիրները քննարկում են առևտրին վերաբերող գանազան հարցեր՝ ապրանքների գներից մինչև դրանց վաճառքի վրա ազդող քաղաքական պայմաններ: Սրանք կարևոր են ոչ միայն հայ վաճառականության պատմության տեսանկյունից, այլև կարող են արժեքավոր լինել նաև 17-18-րդ դդ. սահմանագծին անկում ապրող միջերկրածովյան առևտրի մասին պատկերացում կազմելու համար: Սրա հետ մեկտեղ, նրանք ձեռնպահ չեն մնում նաև անձնական բնույթի տեղեկություններ փոխանակելուց. Հայրապետն իր առևտրական գործընկերներին հաճախ պատմում Է իր անձնական հոգսերի, առօրյա մտահոգությունների ու եղբայր Յաքոբի մասին: Նամակները հարուստ են այսպիսի անմիջական տեղեկություններով, իսկ այս տվյալները խիստ հետաքրքրական են «վաճառականների հոգեբանությունը» հասկանալու տեսանկյունից, մի երևույթ, որի վրա ուշադրություն են հրավիրել Ռոբերտ Լոպեսն ու Իրվինգ Ռայմոնդը դեռևս 1955

թվականին միջնադարյան միջերկրածովյան առևտրի մասին իրենց նշանավոր աշխատության մեջ: Նամակներում քննարկված տեղեկությունների մյուս խումբը վերաբերում է Վենետիկի հայկական համայնքի պատմությանը: Հայրապետը հազվադեպ է, որ անդրադառնում է վենետկահայության ներքին կյանքին, արծարծում զանազան հարցեր, որոնք շատ կարևոր նշանակություն կարող են ունենալ Վենետիկի հայկական առևտրական համայնքի պատմությունը հյուսելիս: Ընդհանուր առմամբ, արդեն իսկ կատարված աշխատանքները հուսալի հիմք կարող են դառնալ Հայրապետ դի Մարտինի 2000-ից ավելի նամակների շուրջ մեկ քառորդ մասի հետագա ուսումնասիրության ու դրանցում ամբարված տեղեկատվության արժևորման համար:

Ծրագրի կատարող՝

Սարգիս Բալդարյան